

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ

**ԶԼՄ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ**

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2014**

ՀՏԴ 659(042.4)

ԳՄԴ 76 ց7

Զ 690

**Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ ժուռնալիստիկայի
ֆակուլտետի գիտական խորհուրդը**

Զ 690 ՁԼՄ ինքնակարգավորում և կարգավորում: Դասախոսություն-
ներ/Կազմ.՝ Վ. Պետրոսյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2014. - 44 էջ:

«ՁԼՄ ինքնակարգավորում և կարգավորում» դասընթացի
նպատակը ապագա լրագրողներին մեղիաղողութի օրենսդրության
և էթիկայի հարցերը ներկայացնելն է:

ՀՏԴ 659(042.4)
ԳՄԴ 76 ց7

ISBN 978-5-8084-1837-0

© ԵՊՀ հրատ., 2014
© Կազմողի համար, 2014

ՂԱՍՏԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Ղասախոսությունները մշակվել են՝ հաշվի առնելով ժամանակակից մեղիամիջավայրում մի կողմից՝ խոսքի ազատության կարևորությունը, ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման, խախտման, դրուանց հետևանքով առաջացած ժուռնալիստական էթիկայի հիմնախնդիրները և մյուս կողմից՝ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում խնդրո առարկա ուսումնական դասընթացի մասին՝ «ԶԼՄ ինքնակարգավորում և կարգավորում»՝ հայերեն լեզվով գրականության սակավությունը:

Մեր նպատակն է՝ ամբողջական ներկայացնել ԶԼՄ կարգավորման և ինքնակարգավորման արդի հիմնահարցերը, զարգացման միտումները, օրենսդրական բացերն ու էթիկական մարտահրավերները: Ավելին, մենք փորձել ենք համակարգել ոչ միայն ազգային ու միջազգային իրավական ակտերը, դրանց առանձնահատկությունները, այլև մասնագիտական էթիկայի սկզբունքներն ու կանոնները, ինքնակարգավորման տարբեր մեխանիզմները, դրանց գործառությունները:

Սակայն առավել կարևորել ենք այն հարցը, թե մեզանում որակյալ լրատվադաշտ ստեղծելու ինչպիսի արդյունավետ մեխանիզմներ կան, և ոլորտի «Վերահսկման» որ տարբերակն է առավել գործող՝ ինքնակարգավորումը, թե՝ կարգավորումը:

Հատուկ ուշադրության են արժանացել արևմտյան և ռուսական փորձը, Եվրոպական կոնվենցիայի տարբեր դրույթներն ու նախադեպերը և դրանց համեմատությունը հայաստանյան իրականության մեջ:

Դասընթացի թեմաներն ըստոված են ըստ կարևորության. մի կողմից մերկայացվում են օրենսդրական ակտերն ու դրանց կիրարկման հնարավորությունները, մյուս կողմից՝ էթիկայի հիմնախնդիրները, դրանց լուծնան միտումները:

Ընդհանուր առմանք դասընթացը կազմված է այնպես, որ ուսանողները կարողանան ծեռք բերել անհրաժեշտ գիտելիքների պաշարը, արդյունավետ օգտագործեն դրանք և ճիշտ կողմնորոշվեն ԶԼՄ ինքնակարգավորման ու կարգավորման ոլորտներում:

ԱԿԱՆԿԱՎՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Դասընթացի ավարտին ուսանողը.

- ❖ կյուրացնի ընդունված իրավական և մասնագիտական անհրաժեշտ հասկացություններ՝ դեռնթողոգիա, մասնագիտական էթիկա, լրագրողի էթիկա, գրագորություն, դեֆամացիա, հեղինակային իրավունք և այլն,
- ❖ կծանոթանա աշխարհում և Հայաստանում կիրառելի ժուրնալիստական էթիկայի հիմնարար սկզբունքներին, առաջացնան նախադրյալներին, զարգացման միտումներին,
- ❖ կյուրացնի օրենսդրության և էթիկայի հիմնական աղերսները, նըմանություններն ու տարբերությունները,
- ❖ կտարանչատի հիմնակարգավորման մեխանիզմները, տեղյակ կինի Դիտորդ մարմնի, Տեղեկատվական վեճերի խորհրդի, Լրագրողների շահերի պաշտպանության կոմիտեի գործունեությանը,
- ❖ կտարբերի մարդու իրավունքների և հասարակական շահերի ուսնահարման դեպքերը, դրանք սահմանող իրավական և էթիկական նորմները,
- ❖ տեղյակ կինի Հայաստանում զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացման գործընթացի նախադրյալներին, թեմային առնչվող մասնագիտական քննարկումներին, դատական պրակտիկային,
- ❖ կծանոթանա դատական գործընթացների լուսաբանման առանձնահատկություններին, տեղեկատվության աղբյուրների հետ աշխատանքի կազմակերպման մեթոդներին,
- ❖ կտարանչատի խոսքի ազատության և ազատ արտահայտվելու իրավունքները, կիմանա դրանք սահմանող ազգային օրենքներն ու միջազգային իրավական ակտերը, ազատ խոսքի օգտագործման սահմաններն ու սահմանափակումները,
- ❖ տեղյակ կինի անձի մի շարք կարևոր իրավունքներին՝ տեղեկատվության ազատություն, պատվի և արժանապատվության, մասնավոր կյանքի գաղտնիություն և այլն,
- ❖ կծանոթանա լրագրողական գործունենությանն առնչվող կարևոր օրենքներին, դրանց կիրառման իրավական հիմքերին,
- ❖ կտիրապետի հեղինակային իրավունքի օգտագործման և պահպանման սկզբունքներին թե՛ ավանդական, թե՛ նոր և այլընտրանքային մերիայում,

- ❖ ինքնուրույն կկարողանա վերլուծել օրենքներն ու դրանցում ներկայացված հասկացությունները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասընթացը բաղկացած է դասախոսություններից և սեմինար պարագնունքներից: Դասախոսությունները կընթանան ինտերակտիվ մեթոդով, իսկ որոշ կարևոր հարցեր առավել խոր ուսումնասիրության կարժանանան սեմինար պարագնունքների ժամանակ: Մասնավորապես շեշտը կդրվի Հայաստանում տեղեկատվության ազատության, մարդու իրավունքների և իիմնարար այլ ազատությունների խախտման դեպքերի քննարկման վրա:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դաս 1 (2 ժամ դասախոսություն)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տաղայացի ընդիանուր նկարագրությունը և որդեգրած մոտեցունը, նպատակներն ու մեխանիզմները, իիմնավորել թեմաների արդիականությունն ու մատուցման եղանակները, նյութի յուրացման գործուն մեխանիզմները:

Դաս 2-4 (6 ժամ դասախոսություն)

Թեսա 1

ԺՈՒՇԱՎԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԻԲՐԵՎ ԼՐԱՏՎԱՍԻԶՈՑՆԵՐԻ ԻՆՔՆԱԿՐՈԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ինչ է ժուռնալիստական էթիկան

Ժուռնալիստական էթիկան միջազգային տերմինաբանությամբ առավել հայտնի է դեռնթողոգիա անվամբ և ունի ռոմանական ծագում: Իսկ բուն հասկացությունն ավելի ընդգրկուն է և հաճախ ընթացնվում է որպես «չգրված, սակայն համընդիանուր համաձայնության արժանացած կարգ, ավանդույթ, որով սահմանվում են պատշաճն ու անպատշաճը, ընդունելի և անընդունելի վարքը»¹:

Գոյություն ունի էթիկայի երեք հիմնական տեսություն՝

1. **դեռնթողիա-պարտականության վրա հիմնված,**
2. **թերեղոգիա- հետևանքների վրա հիմնված,**
3. **իրավիճակային:**

Այս երեք տեսությունների հիմքում ընկած է մեկ հարց՝ արդյոք նպատակն արդարացնում է միջոցը:

Ժուռնալիստական էթիկան անմիջականորեն առնչվում է ընդիանուր բարոյականության սկզբունքներին: Գիտությունը, որն ուսումնասիրում է նաև ազիտական բարոյականության նրբությունները, կոչվում է նաև ազիտական էթիկա: Եթե ժուռնալիստական էթիկան կիրառելի է կոնկրետ նաև ազիտական շրջանակներում և գործում է խիստ մշակված կանոններով, ապա բարոյականությունն ավելի բնորոշ է անհատականությանն առհասարակ, քանզի բարոյականություն ասելով՝ հասկանում ենք «անհատի «անձնական էթիկան», պարտի գգացումը՝ հիմնված աշխարհներական ու կենսակիրծի վրա»:

Եթե հոյս փիլիսոփա Սոկրատեսը բարոյականության մասին իր դատողությունները կառուցում էր՝ խոսելով «ներքին ձայն» կոչվածի մասին, այն համարելով նարդու բարոյական հեղինակության ամենաբարձր հատկանիշը, ապա Արիստոտելն առաջինն էր, ով ստեղծեց հասարակության մեջ բարոյական հարաբերությունների համակողմանի մի հայցակարգ՝ այդպիսով համակարգելով էթիկայի մասին իր դատողությունները:

¹ Պետրոսյան Վ., ժուռնալիստական էթիկա. հիմնախմնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում, Երևան, 2012, էջ 7:

Ուստ տեսաբան Ավրամովն էլ, մասնագիտական բարոյականությունը դիտարկելով երկու տեսանկյուններից, առանձնացնում է «լրագրողի էթիկա» և «մասնագիտական էթիկա» հասկացությունները: Եթե առաջինի դեպքում տեսաբանը դիտարկում է գիտությունը լրագրողի բարոյականության, մասնագիտական առանձնահատկությունների, իր աշխատանքի բարոյական հատկանիշների մասին, ապա մասնագիտական էթիկան նա նույնացնում է մասնագիտական բարոյականության կանոնների ու նորմերի հետ², այլ կերպ ասած՝ լրագրողական կանոնագրերի:

ԹԵՍԱ 2

«ԶԱՄ-ՆԵՐԻ ԻՆՔԱՆԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԽԱՆԻՉԱՍՏԵՐՈՅ, ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸՆԵՐՈՅ

Ինքնակարգավորում հասկացությունը

Լրագրողի գործունեությունը կարգավորվում է ինչպես համապատասխան օրենքների, իրավական ակտերի, այլ կերպ ասած՝ կարգավորման, այնպես էլ ոլորտի մասնագետների կողմից մշակված հատուկ մեխանիզմների միջոցով՝ ինքնակարգավորմամբ: Գործնականում ինքնակարգավորումը ենթադրում է ինքնակազմակերպում, ինքնատիրապետում և ինքնաղեկավարում: Եթե ինքնակազմակերպման շնորհիվ ոռոշակի ռազմավարություն է մշակվում ժուրնալիստական նյութի պատուատման համար, ապա ինքնատիրապետման գործառույթը այս կամ այն խնդրի լուծման որակական ստուգումն է, ինարավոր տարածայնություններից խուսափելու ձգուումը: Տարածայնությունների բացառումն էլ հնարավոր է դառնում շնորհիվ ինքնաղեկավարման: Լրագրողի գործունեության ինքնաղեկավարումը ենթադրում է ոչ միայն սեփական վարքը կարգավորող բարոյական սկզբունքների ու նորմերի գիտակցում, այլև հասարակության տարբեր շերտերի հանդեպ հարգանք, միջանձնային բարոյական վերաբերմունքի դրսևորում:

Ինքնակարգավորման մեխանիզմները

Մամուլի խորիուրդներ: Նմանատիպ խորիուրդներ գործում են աշխարհի ոչ բոլոր երկրներում: Զբաղվում են հասարակության ներկայացուած բողոքների քննմամբ՝ կապված այս կամ այն հրապարակման հետ,

² Абраамов Д. С., Профессиональная этика журналиста, М., 1999, стр. 6.

և անհրաժեշտության դեպքում համապատասխան որոշում են ընդունում: Առաջին մամուլի գործերի խորհուրդը հիմնվել է Եվրոպայում՝ օրենքի երկիր համարվող Շվեդիայում, 1916թ.: Ի տարբերություն Շվեդիայի՝ Նորվեգիայում գործող մամուլի խորհրդի լիազորությունները թեև հիմնականում նույնն են, այնուամենայմիվ, խորհուրդը հստակ դիրքորոշում ունի բողոքների ընդունման հարցում. բողոքը չի ընդունվում, եթե գործն արդեն գտնվում է դատարանի վարույթում կամ եթե տուժողը մտադիր է դիմել դատարան: Իր գործունեությամբ աչքի է ընկնում նաև ավստրալիական մամուլի խորհուրդը: Մյուսներից տարբերվում է նրանով, որ բողոքները չընդունում երրորդ մեկից /որոնց ուղղակիորեն չի վերաբերում հրապարակված տվյալ հոդվածը/, ով ճանաչում է հոդվածի հերոսին և տեսառում է, որ վիրավորվում է վերջինիս պատիվը, անունը:

Հայաստանում 2007թ. մարտին Երևանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ ստեղծվեց ՁԼՍ-ների էթիկայի Դիտորդ մարմին, որը բավական հետևողական է մամուլի հանդեպ լսարանի ունեցած բողոքների քնննամբ, առաջնորդվում է հատուկ վարքականուով և դրան կից՝ ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հռչակագրով, որը ստորագրել է Հայաստանի 48 լրատվամիջոց ներկայացնող 45 սուբյեկտ: Իսկ նախաձեռնությանը սատարել է 9 լրագրողական միություն:

Մեզանում ինքնակարգագործման գործընթացի հանդեպ հետաքրքրությունը հիմք հանդիսացավ, որպեսզի վերջին տարիներին ստեղծվեն ինքնակարգագործող նոր կառույցներ՝ *Տեղեկատվական վեճերի խորհուրդը* և *Լրատվամիջոցների շահերի պաշտպանության խոմքը*:

Մամուլի օմբուդսմեն: Պաշտոնը կյանքի է կոչվել 20-րդ դարասկզբին ԱՄՆ-ում՝ 1913թ. «Սյու Յորք Վորլդում»: Հայաստանում մամուլի համար նախատեսված նման առանձին ինստիտուտ դեռևս չկա, թեև մամուլի օմբուդսմեն ունենալու առաջին քայլերը ձեռնարկվեցին «ԳԱԱՍ» հեռուստաընկերության և «ԱրաՎոտ» օրաթերթի կողմից:

Լրագրողական կազմակերպություններ և միություններ: Սրանք այն կառույցներն են, որոնց շահագրգռվածությունը ոլորտը կարգավորելու հարցում մեծ է: Հայաստանում այդպիսիք են Հայաստանի ժուռնալիստների միությունը, Երևանի մամուլի ակումբը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (նախկին Խնտերնյուս հ/կ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը:

Խմբագրական կողեզրիա: Բննում է խմբագրության ստացած բողոքներն ու որոշումները կայացնում:

Եթիկայի կանոնագրեր: Սրանք առավել տարածված մեխանիզմներ են:

ԹԵՍԱ 3

ԵԹԻԿԱՅԻ ԿԱՍՈՆԱԳՐԵՐԻ ՍՏԵՂՇՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ

Առաջացման նախադրյալները

Մեզանում ժուրանալիստական եթիկա հասկացությունը շրջանառության մեջ մտավ անկախացումից հետո, ինչը կապված է նախկին պետական-միակուսակցական լրատվամիջոցներին փոխարինած ազգային, հանրային, ինչպես նաև նորաստեղծ անկախ կամ մասնավոր տարրեր լրատվամիջոցների ի հայտ գալու հետ: Հայկական ժուրանալիստիկայում ևս, միջազգային փորձի օրինակով, սկզբնավորվեց և աստիճանաբար սկսեց զարգացում ապել մամուլի ազատականացման գործընթացը: Համարել, որ դաշտում նկատելի խնդիրները այլև լուծված են, իսկ անհրաժեշտ մակարդակը՝ առկա, առայժմ անհնար է, քանզի այն մի կողմից ենթադրում է ոլորտի լիակատար անկախացում, մյուս կողմից նախատեսում է բնագավառի մասնագետների հմտացում և բարձրակարգ լրագրողի բարոյական կերպարի ձևավորում: Տեղին է մեջբերել Եթիկայի համաշխարհային ինստիտուտի հիմնադիր Ոհշվորդ Կիդրերի այն տեսակետը, որ «Եթիկան չգրված օրենքներին ենթարկվելն է, այսինքն՝ լրագրողները պետք է ենթարկվեն իրենց իսկ կանոններին, ինտենս իրենց նյութերի ճշգրտությանը և ոչ թե առաջնորդվեն միայն պետության կամ որևէ կազմակերպության կողմից ընդունված օրենքներով, վարվեն այսպես կամ այնպես»³:

Ցուրաքանչյուր երկրի հասարակական, սոցիալ-տնտեսական, քաղաքական կացութաձևներ պայմանավորված՝ ժուրանալիստիկան անցնում է զարգացման նոր փուլ: Ասվածի լավագույն ապացույցը 1991 թ. խորհրդային հասարակարգի փլուզմամբ անկալիվող անկախության հաստատումն էր: Խորհրդային տարիներին կոմիտեն մանուկն օգտագործում էր սեփական գաղափարախոսությունը հասարակության շրջանում տարածելու համար՝ այդպիսով որոշակիացներով թե՝ ժուրանալիստիկայի դերը որպես մասնագիտություն և թե՝ լրագրողի կարգավիճակը հասա-

³Պետրյան Վ., ժուրանալիստական եթիկա. հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում, Երևան, 2012, էջ 46:

ռակության մեջ: Ամերիկյան տեսաբան Ուիլբրուր Շրամն իր «Կոմունիստական մամուլի տեսությունը» աշխատության մեջ հստակ տալիս է կոմունիստական շրջանի ՉԼՍ-ների նկարագիրը. «Լրատվամիջոցներն օգտագործվում են իրու գործիք պետության և կուսակցության համար և նմանատիպ «գործիք» հանդիսացող մյուս կառույցների հետ կազմում են մի ամբողջություն»⁴: 1980-ականների վերջին և 90-ականների սկզբին ստեղծված քաղաքական բարդ խնդրումներն ի վերջո հանգեցրին ԽՍՀՄ փլուզմանը, ինչի հետևանքով նախկին միութենական հանրապետությունները, այդ թվում Հայաստանը, քննեցին անկախության ուղին: Մանուկի ազատությունն ինքնին ենթադրում էր կարծիքների ազատություն. մարդիկ այլև չեն վախենում իրենց տեսակետներն արտահայտելուց: Սակայն մամուլի քաղաքական ազատությունն ու անկախությունը սկսեցին մեծապես պայմանավորվել ֆինանսատնտեսական գործոններով: Անկախության առաջին տարիներին լրատվամիջոցներում տեղ գտած անստույգ, ոչ հավաստի փաստերն ու տեղեկատվությունը նվազեցրին մամուլի հանդեպ լսարանի վստահությունը: Սա իր հերթին խորացրեց լրատվամիջոցների, հատկապես տպագիր պարբերականների ձգնաժամային վիճակը՝ հանգեցնելով բաժանդրդների, սպառողների թվի կտրուկ նվազման: Չնայած սրան՝ օրեցօր երկան էին գալիս նոր թերթեր՝ տարբեր ուղղվածություններով: Նրանց քանակական պոռթկումը փոխեց ժուռնալիստիկայի նկարագիրը և ընդլայնեց տեղեկատվություն ստանալու հնարավորությունը: Սակայն, ինչպես ասում են, քանակը միշտ չէ, որ որպէս է, պրոֆեսիոնալիզմ և բարոյականություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանում նոր մամուլի կայացման գործընթացը չէր կարող իր անմիջական ազդեցությունը չունենալ մեզ-նում ժուռնալիստիկայի ձևակորման ու զարգացման ընթացքի վրա: Անկախության առաջին երեք տարիները բնութագրվում են որպես մամուլի հին, ավանդական ձևերից ու կաղապարներից ազատվելու տարիներ, երբ մամուլը խորհրդային կարգերի քայլայումից հետո ազատվեց կուսակցական ճնշումներից: Այս շրջանում ավելացավ տպագիր օրգանների թիվը, իսկ ամենակարևոր ձեռքբերումը եղավ 1991թ. «Մանուկի և զանգվածային մյուս լրատվամիջոցների մասին» <<օրենքի ընդունումը, որով որոշակի արտօնություններ տրվեցին լրատվամիջոցներին ու լրագրողներին: Ավելի ուշ Երևանի մամուլի ակումբը, Հայաստանի ժուռնալիստների միությունը, լրագրողական մյուս ակտիվ հասարակական կազմակերպություններն ու որոշ լրատվամիջոցներ սկսեցին ընդունել

⁴ Shrum W., Soviet Comunistic Press, 1997, p. 25.

Էթիկայի սեփական կանոնագրերը: Դրանցում հեղինակները, իիմնական շեշտը դնելով արդարություն, ճշգրտություն, օբյեկտիվություն սկզբունքների վրա, փորձում են կարգավորել նաև այլ կարևոր հարաբերություններ ու պահանջներ ևս:

Դաս 5 (2 ժամ սեմինար պարապմունք)

ՔՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Լրագրության օրենսդրության և էթիկայի փոխառնչությունները:
- Դիտորդ մարմնի կայացրած եզրակացությունները:

Դաս 6-8 (6 ժամ դասախոսություն)

ԹԵՄԱ 4

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՍՈՆԱԳՐԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Լրագրողների վարքն ու մասնագիտական պարտականությունները, լրատվամիջոցների գործունեության էթիկական բազան կազմող սկզբունքները, նորմերը և վարքականուները սահմանված են հատուկ փաստաթղթերում, որոնք առավել հայտնի են էթիկայի կանոնագիր անվամբ: Ընդհանուր առնամբ, էթիկայի կանոնագրերը միմյանցից տարբերվում են լրագրողներին ներկայացվող ընդհանուր պահանջների աստիճանով: Դրանց մի մասը ներառում է ընդհանուր սկզբունքներ, մյուս մերը կոնկրետացնում են լրագրողի պահվածքն իրավիճակին համապատասխան, երրորդները՝ լրագրողի վարքագիծը կոնկրետացնող պահանջներ, չորրորդներն էլ երբեմն համալրվում են որոշակի հավելվածներով:

Որպես կանոն՝ տարբերում են էթիկական կանոնագրերի հետևյալ տեսակները՝

1. Ճյուղային (կապված ժուռնալիստիկայի կոնկրետ բնագավառի հետ, ինչպես օրինակ՝ մեզանում հետաքրնող լրագրողների ընկերակցության կողմից ընդունված կանոնագիրը),

2. **Խմբային** (մի խումբ լրատվական կազմակերպություններ միավորվելով՝ ընդունում են կանոնագիր),
3. **Խմբագրական** (կանոնագրի ընդունումը տվյալ լրատվամիջոցի նախաձեռնությունն է. մեզանում այդպիսին է «Առավոտ» օրաթերթի էթիկայի կանոնագիրը),
4. **ազգային** (ոլորտը կարգավորող կանոնագրերի ընդունմանը ծերնամուխ են լինում տվյալ երկրի տարածքում գործող լրատվական կազմակերպություններն ու լրատվամիջոցները),
5. **միջազգային** (նախաձեռնությունը պատկանում է միջազգային հեղինակավոր կառույցներին),
6. **գերատեսչական** (հեղինակները տարբեր գերատեսչություններն են):

Ժուրնալիստական էթիկայի կանոնագրերի գործառույթները ճիշտ կլինի դասակարգել այսպես՝

1. **ինքնակարգավորման** գործառույթ,
2. **անվտանգության** կամ մասնագիտական համերաշխության գործառույթ (կարևորվում է այն հարցը, թե ու՞ն, ինչպես և ինչից է պաշտպանում լրագրողական համերաշխությունը),
3. **մասնագիտական արժանապատվության** պահպանման գործառույթ (կարևորվում են ինքնահարգանքը, բարոյականության և ժուրնալիստիկայի համատեղելիությունը),
4. **կրթական** գործառույթ,
5. **տնտեսական** գործառույթ (երբ ուշադրություն է դարձվում ԶԼՄ-ների սպառողական գրավության ներացմանը),
6. **անձնակազմի ղեկավարման**, **բարելավման** գործառույթ, որտեղ էթիկական կանոնագրերը հանդես են գալիս իբրև «ծառայողական իրահանգների տեսակ»:

Տեսականորեն կան հայացքներ՝ կապված այն պահանջների հետ, որոնք հասարակությունը առաջադրում է լրագրողական միջավայրին: Օրինակ՝ ռուս տեսաբան Գ. Լազուտինան⁵ այդպիսի պահանջների ամբողջությունը դիտում է իբրև երեքհարկանի բուրգ, որի առաջին հարկում այնպիսի հասկացություններն են, ինչպիսիք են՝ մասնագիտական պարտականությունը, պատասխանատվությունը, խիղճը, պատիվն ու արժանապատվությունը: Երկրորդ հարկը կազմում են մասնագիտական բարոյական սկզբունքները, որոնցում արտահայտված են լրագրողի վարքագիր կոնկրետ պահանջները: Իսկ երրորդ հարկում արդեն այն նորմերն

⁵ **Լազուտինա Г. В.**, Профессиональная этика журналиста, М., 1999, стр. 97.

Են, որոնք վերահսկում են լրագրողի վարքագիր բոլոր տեսանկյունները բացառապես կոնկրետ իրավիճակներում, այլ կերպ ասած՝ մասնագիտական-էթիկական նորմերը:

ԹԵՍԱ 5

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հաճախ լրագրողները բարոյական ընտրության խնդրի առաջ են կանգնում. ո՞րն է էթիկայի տեսակետից ավելի ծիշտ՝ իրապարակել, թե՝ թաքցնել ստացված կարևոր տեղեկատվությունը: Նման պարագայում օգնության են հասնում մասնագիտական էթիկան և օրենսդրությունը, որինցում լրատվության աղբյուրի իրավունքները պաշտպանող հատուկ կետեր կան:

Օրինակ՝ Բորդյում 1954 թ. ժուրնալիստների միջազգային ֆեդերացիայի ընդունած ժուրնալիստի պահվածքի սկզբունքների հոչակագիրը հստակ սահմանում է, որ «ժուրնալիստը պարտավոր է հետևել մասնագիտական գաղտնիքին և չբացահայտել տեղեկատվության աղբյուրը»⁶: Իսկ ահա 1996 թ. Պորֆեսիոնալ ժուրնալիստների ընկերության կողմից ընդունված էթիկական նորմերի կանոնագրում ասվում է. «Մինչև տեղեկատվության աղբյուրին անունը չհրապարակել խոստանալը, բացահայտեք նրա միտումները: Լիարժեք բացատրեք խոստումը կատարելու ձեր պայմանները՝ տրված տեղեկատվության փոխարեն: Խոստումը պետք է պահել»⁷: Տեղեկատվության աղբյուրների պաշտպանության առանձին երաշխիք է Եվրոպական կոնվենցիան:

Մեզանում գործող էթիկական կանոնագրերում ևս կարևորվում է տեղեկատվության աղբյուրի պաշտպանության հարցը: Օրինակ՝ «Արավոտի» լրագրողները հարցում են գրուցակիցների խնդրանքը՝ չհրապարակել իրենց անունը, տեղեկատվության աղբյուրը կամ չհրապարակել մասնավոր գրուցում իրենց հայտնած տեղեկությունը: Եթե Երևանի մամուլի ակումբի էթիկայի կանոնագիրը տեղեկատվության աղբյուրը չհրապարակելու հարցում որևէ հատուկ կետ չի նախատեսում (հակառակ այն բանի, թե ինչ ձանապարհով կարող է լրագրողը տե-

⁶ Профессиональная этика журналиста, Фонд защиты гласности, 2-е издание, исправленное и дополненное, М., 2002, стр. 2.

⁷ www.spj.org

դեկատվություն ծեռք բերել), ապա Մերիա նախաձեռնությունների կենտրոնի էթիկայի կանոնագրով նախատեսվում է «անհրաժեշտության դեպքում ապահովել տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը»: Հայաստանի ժուրնալիստների միության անդամի էթիկայի կանոնագրով էլ միության ցանկացած անդամի պարտադրվում է հնարավորինս խուսափել տեղեկատվության գաղտնի աղբյուրներ օգտագործելուց, սակայն եթե տեղեկատվությունը նրան տրված է աղբյուրը գաղտնի պահելու պայմանով, ապա նա որևէ պարագայում չպետք է բացահայտի այն:

Հաշվի առնելով այն, որ հետաքրննական ժուրնալիստիկան չի կարող գործել առանց տեղեկատվության գաղտնի աղբյուրների, հետևաբար չենք բացահայտում տեղեկատվության աղբյուրը, եթե նախապես խոստում է տրվել», - էթիկայի իրենց կանոնագրի այս սկզբունքով են պայմանավորում Հետաքրննող լրագրողների ընկերակցության անդամները տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու համարմանքը: Առանձին հետազոտողներ անանուն աղբյուրների լայնորեն կիրառումը կապում են 1970-ական թվականների հետ, երբ «Ուտքըրգեյթի» հայտնի սկանդալից հետո շատ լրագրողներ սկսեցին նմանվել Բոր Կուրվորոին և Կառլ Բերնսթայմին, ովքեր բացահայտել էին նախազահ Նիքունի վարչակազմի գեղձարարությունները: Այն, որ անանուն աղբյուրների տեղի-անտեղի վկայակոչումը միշտ մեծ վտանգ է պարունակում, ակնհայտ է: Տեղին է մեջբերել «Ասլանտա Քոնսթիթյուշըմ» խճագիր Էդուարդ Սիրսի՝ իր աշխատողներին ուղղված խոսքը: «Փորձառու լրագրողի համար աղբյուրից մեջբերումը գենք է: Անփորձ լրագրողի համար՝ հենակ»:

Անանուն աղբյուրով տեղեկատվությունը տարբերվում է իր ձևակերպումներով՝ «Լավատեղյակ աղբյուրներից հայտնի դարձավ», «Մեր տեղեկությունների համաձայն...», «Կառավարությանը մոտ կանգնած մեր աղբյուրի փոխանցմանը...», «Մեր տեղեկություններով», «...Ըստ որոշ լուրերի...» և այլն:

Ասեկուս

Անանուն աղբյուրով տեղեկատվության նման տպագիր և հատկապես առցանց մամուլում թիզ չեն ասեկուսները, որոնք ևս ունեն իրենց բնորոշ ձևակերպումները: Սովորաբար հանդիպող տարբերակներն են՝ «Ասում են...», «Վերջին օրերին լուրեր են տարածվել, ըստ որոնց...», «Համաշ լուրեր են շրջում...», «Խոսակցություններ են տարածվել, թե ...», «Չար լեզուները շշուկներ են տարածում....» և այլն: Մտավախությունը, թե արդյո՞ք միշտ են իրականությանը համապատասխանում ասեկուսներն ու անանուն տեղեկատվությունները և արժե՞ անմիջապես հավատալ

դրանց, առանց այլ աղբյուրներից ստուգելու, տեղին է: Իրականում լրագրողների համար եթե մի կողմից ավելի հեշտ է տեղեկատվություն ձեռք բերել աղբյուրը չբացահայտելու խսումնան պարագայում, ապա նյութ կողմից նման իրավաբարեկումները հասարակությանը կարող են կանգնեցնել ապահովեկատվություն ստանալու վտանգի առաջ:

Անազնիվ մեթոդների օգտագործում

Ժուրնալիստական եթիկայի վիճելի հարցերից է, անշուշտ, տեղեկատվության ձեռքբերման թույլատրելի և անթույլատրելի մեթոդների կիրառումը: Երբեմն անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու համար լրագրողը դիմում է այնպիսի միջոցների, ինչպիսիք են՝ դիմակի, մասնագիտությունը փոխելու, թաքնված տեսախցիկով և ձայնագրիչով աշխատելու մեթոդները: Սրանք լայնորեն կիրառվում են հատկապես հետաքննական ժուրնալիստիկայի շրջանակներում:

Դիմակի մեթոդն առաջինն օգտագործողներից մեկը «Զիկագո Սան թայմսի» թղթակից Նելլի Բլայն էր, որը 1980թ. տպագրեց «10 օր հոգեբուժարանում» հոդվածը: Տեղեկատվության ձեռքբերման համար նա ներկայացակ իբրև հոգեկան հիվանդ: Այս մեթոդը երկար ժամանակ կիրառվում էր արևմտյան ժուրնալիստիկայում: Բայց ավելի ուշ խմբագրութերն սկսեցին զգուշություն ցուցաբերել տեղեկատվության ձեռքբերման անազնիվ մեթոդների նկատմամբ: Դիմակի մեթոդին շատ նման է մասնագիտությունը փոխելու մեթոդը: Վերջինս արդարացված է միայն այն դեպքում, եթե լրագրողը ոչ միայն պատրաստ է, այլև իրականում ի վիճակի է կատարել այն գործը, որն ստանձնել է: Այս մեթոդին սովորաբար դիմում են, որպեսզի կարողանան հստակ պատկերացնել այս կամ այն գործի նրբությունները, ինչպես նաև բացահայտել հետազոտվող ոլորտում առկա թերությունները: Մի կարևոր հանգամանք եթե ոստիկանները հանցագործության բացահայտման նպատակով կառող են հանդես գալ որպես տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ, ապա լրագրողները դրանց ընտրության հարցում ունեն որոշակի սահմանափակումներ: Իրենց գործունեության ընթացքում լրագրողները հաճախ դիմում են թաքնված տեսախցիկի և ձայնագրիչի օգնությամբ: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է դրանց օգտագործման և տարածման սահմանները: Նմանատիպ ձայնագրությունների հրապարակումը թույլատրելի է, քանի դեռ՝

- չի խախտվել մարդու սահմանադրական իրավունքը և պատությունը,

- դրանք անհրաժեշտ են հասարակական շահերի պաշտպանության համար,
- եթե ծայնագրման ներկայացումը կատարվում է դատարանի որոշմանք:

ԹԵՍԱ 6

ԳՐԱԳՈՐՈՒԹՅՈՒՆ

Ժուրնալիստական էթիկայի մերժելի սկզբունքներից մեկը գրագորությունն է, այլ խոսքով՝ ուրիշի մտավոր աշխատանքի օգտագործումը՝ առանց վերջինիս հղում կատարելու: Գրագորությունը կամ հեղինակային իրավունքի խախտումը նույնականացնելու մեջ է քրեորեն պատճելի առարք և կարգավիրովում է <<Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով. «Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»: Լրագրողների՝ ննան իրավիճակներում շահայտնվելու միակ երաշխիքը տեղեկատվության աղբյուրի վկայակումն է:

2006 թ. հուլիսի 15-ին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» <<օրենքը կարգավորում է այդ իրավունքներին առնչվող հարաբերություններն ու դրանց խախտումները:

Մեզանում գործող ժուրնալիստական էթիկայի կանոնագրերում հատուկ ուշադրություն է դարձվում գրագորությանը՝ այն դիտարկելով որպես մասնագիտության հետ անհամատեղելի երևույթ: Կոչ է արվում հարգել այլոց մտավոր սեփականությունն ու հեղինակային իրավունքները: Առցանց մամուլում այսօր ամենաշատն է խախտում հեղինակային իրավունքը. շատ լրագրողների ու լրատվական ծառայությունների համար բոլի փեյսթ դարձել է գործելակերպ, որն էլ հարուցեց իրենց աշխատանքը գնահատող մասնագետների, լրագրողական ընկերությունների ու իրավաբանների դժգոհությունը: Նրանց բողոքը դրսենորվեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» <<օրենքում փոփոխություններ կատարելու հայտարարությամբ: Արդեն 2013թ. օգոստոսի 30-ին <<օրենսդիրը ընդունեց հիշյալ օրենքում լրացրումներ կատարելու մասին որոշում, որով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ. «Օրվա

Առորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ»⁸, եթե «դրանց արտահայտման ձևը ստեղծագործական աշխատանքի արդյունքն է»⁹: Սույն հոդվածի նախկին տարրերակում այս բնույթի տեղեկատվությունները հեղինանակային իրավունքի օբյեկտ չեն: Իսկ ահա գրագորության հարցը կարգավորվում է Օրենքում լրացված 22.1 հոդվածով՝ «Լրատվական նյութի օգտագործման պայմաններ», ըստ որի՝ «Տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի (ցանցային լրատվության միջոց) լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը այլ տպագիր լրատվական միջոցներում, ինտերնետային կայքերում թույլատրվում է հրականացնել միայն մեջբերման նպատակն ադրաբացնող ծավալով՝ առանց հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության և վարձատրության վճարման»¹⁰: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրումը կարող է հրականացվել միայն կողմների միջև կնքված պայմանագրով, մինչդեռ սկզբնադրյուրին հղում կատարելն ու էլեկտրոնային կայքի տիրույթային անվանումը (դոմեյնը) նշելը պարտադիր են, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնադրյուր լրատվական նյութի վերարտադրությունն է: Լրցումներ կատարելուց հետո օրենքի 22.1 հոդվածի խախտման դեպքում վնասի հատուցման չափ է սահմանվել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկը:

Դաս 9 (2 ժամ սեմինար պարապմունք)

ՔՆՍԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Անանուն աղբյուրների կիրառման ձևերը:
- Տեղեկատվության աղբյուրի պաշտպանության լրագրողի իրավունքը:
- ՀՀ օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»:

Հանձնարարված գրականության քննարկում «Տեղեկատվության ձեռքբերման անթույլատրելի մեթոդների կիրառման հարցերը» թեմայով:

⁸ www.parliament.am

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

Դաս 10-11 (4 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱ 7

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զրպարտություն և Վիրավորանք

Երաշխավորելով խոսքի ազատությունը՝ մարդու իրավունքները պաշտպանող միջազգային իրավունքի նորմերը միաժամանակ նշում են, որ այս ազատությունը բացարձակ է և կարող է սահմանափակվել մարդու պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով։ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում են, որ խոսքի ազատությունը ենթակա է սահմանափակման այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով։

Մինչ զրպարտության և Վիրավորանքի ապաքրեականացումը, վերջիններս քրեորեն պատմելի արարքներ էին, և կարգավորվում էին << Քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածներով /ապաքրեականացման գործընթացը մեզանում անխուսափելի էր, որովհետև Եվրախորհրդի պահանջներից մեկն էր/։ 2010 թ. մարտին Հայաստանի խորհրդարանն ընդունեց Հայաստանի Քաղաքացիական, Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերում ՁԼՍ-ի մասով ուղղումներ և լրացրումներ կատարելու մասին օրենքի նախագիծ /գործընթացը մեզանում անխուսափելի էր, որովհետև Եվրախորհրդի պահանջներից մեկն էր/։ Ըստ փոփոխությունների՝ Հայաստանի քաղաքացիական օրենսգրքում ընդունվեցին զրպարտության և Վիրավորանքի մասին նոր դրույթներ, որոնց նախորդեցին բուռն բանավեճերը լրագրողների ու մեդիա փորձագետների շրջանում՝ կապված հիմնականում օրինախախտության հանար սահմանված փոխառուցման չափերի հետ՝ 500.000-ից մինչև 2 միլիոն դրամ։

<< Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ կետով «զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) իրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատախանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը։ Նոյն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում անձը կարող է դատական

Կարգով պահանջել կամ հերքում, կամ նյութական վճարի փոխհատուցում՝ նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով: Իսկ վիրավորանքի դեպքում (որը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ) այդ նույն լրատվամիջոցը պարտավորվում է լրիվ կամ մասնակի տպագրել դատարանի վճիռը, կամ սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել»¹¹: Ավելին, անձն ազատվում է վիրավորանքի կամ գրապարտության համար պատաժանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, այլ անձի իրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթորերի, լրատվության այլ միջոցի բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղձ վերարտադրությունն են, և տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Լրացումներ կատարելու պահից մինչ 2011թ. նոյեմբերը՝ Սահմանադրական դատարանի հայտնի 997 որոշման ընդունումը, հայաստանյան լրատվամիջոցների դեմ գրապարտության և վիրավորանքի մասով հարուցվել է ավելի քան 44 քաղաքացիական դատավարության գործ, որոնք դեռևս ընթացքի մեջ են: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության 2012թ. ներկայացրած հաշվետվության համաձայն՝ «հայցվորների մեջ եղել են 18 սովորական քաղաքացի, 9 պետական պաշտոնյա և 1 պետական կազմակերպություն, 10 քաղաքական գործիչ, 1 լրատվական գործակալություն, 2 կրոնական կազմակերպություն: 4 դատական գործ՝ 2 փաստաբանների և 2 հանրային դեմքերի կողմից, ովքեր միասին հարուցել են 2 դատական գործ»: Այս գործերի մեջ մասի դեպքում հայցվող իրավական պաշտպանության միջոցը հանդիսացել է գրապարտության և վիրավորանքի դիմաց դրամական փոխհատուցման պահանջը, ապա հերքումը, որին հաջորդում է դատական ծխսերի փոխհատուցման պահանջը: Համեմատաբար քիչ է վիրավորանքի դիմաց ներողություն խնդրելու, պատավանի և վճիր իրապարակման պահանջը: «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության փորձագետների հավաստմանը դրամական պահանջները տատանվել են 2-4 մլն. դրամի սահմաններում: Ընդ որում՝ «անենաբարձր փոխհատուցման պահանջը կազմել է 18 մլն. դրամ, իսկ ամենացածրը՝ 1 լումա»: Սակայն խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տվյալներով՝ 2012թ. առաջին հինգ ամիսներից ի վեր ԶԼՍ-ների դեմ վիրավորանքի և գրապարտության հիմքով դատական հայցեր վարույթ

¹¹ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Յոդված 1087.1:

չեն ընդունվել: Սա խոսում է այն ճամփին, որ Սահմանադրական դատարանի որոշումը բեկումնային եղավ խոսքի պատության պաշտպանության և լրատվամիջոցների դեմ տուգանքների նշանակման հարցում: Արդյունքում՝ 2013թ. անցած 2 տարիների համեմատ քչացել են լրատվամիջոցների դեմ զրայքարտության և վիրավորանքի դատական հայցերը:

Հ.Գ. Ժուռնալիստիկայի պատմության մեջ զրայքարտության դասական օրինակ է ««Եյու-Յորը թայնս» ընդեմ Սալիվանի» հայտնի դատական հայցը, երբ 1964 թ. ԱՄՆ Գերագույն դատարանը լրագրողներին որոշակի արտոնություններ տվեց կապված իրենց վսալների հետ: Դատարանը որոշեց, որ եթե զրայքարտչական հոդվածի զոհը հասարակական պաշտոնյամ է, ապա նա պետք է ապացուցի, որ նյութը տպագրվել է «իրական չար դիտավորությամբ»: Վերջինս ապացուցելու համար հայցվորը դատարանում պետք է հաստատի, որ նյութը տպագրվել է «դրա վսալ լինելու մասին ինացությամբ, նյութի ճշմարտացիության նկատմամբ անխոհեմ անտարբերությամբ»:

Միջամտություն անձնական կյանքին

Մարդու իրավունքների խախտում է նաև անձնական կյանքին միջամտությունը: Առաջին հայացքից թվում է, թե այս, ինչպես նաև զրայքարտության և վիրավորանքի, պատվի և արժանապատվության խախտումների ընդհանուր ծևակերպումները նույն են: Բայց նրբություններ, այնուամենայնիվ, կան: **Պատիկը** անձի հասարակական գնահատականն է, նրա՝ որպես հասարակության անդամի սոցիալական և հոգևոր հատկությունները բնութագրող հիմնական չափանիշը, որը մեծ նաևնք պայմանավորված է հենց իրենով, իր դրսևորած վարժագծով, այլ ճարդկանց, հասարակության և պետության հանդեպ ցուցաբերած վերաբերնությունով: Իսկ արժանապատվությունը սեփական հատկությունների, կառողությունների, ունակությունների, աշխարհայացքի ներքին ինքնազնահատականն է: **Բարի համբավը** անձի հասարակական արժենումն, հեղինակության, ընդունակությունների և մյուս հատկանիշների գնահատականն է ազգականների, ընկերների ու այլոց կողմից: Այս երեք հատկանիշները փոխվագակցված են, և երբ նսենացվում է սրանցից որևէ մեկը, նյութներն անմիջականորեն արնչվում են դրան:

Ենելով հասարակական շահերից լրագրողն իրավունք ունի^o պարզել ու քննարկել այն հարցը, թե, օրինակ, ինչ փողերով է այս կամ այն չինով-օիկը ձեռք բերում թանկարժեք իրեր, դոյակներ և այլն: Հարցը ենթադրում է երկու մոտեցում:

1.Եթե հերոսը հասարակական պաշտոնյա է (նախագահ, նախարար, պատգամավոր, քաղաքապետ, համայնքապետ և այլք), ապա ներխուժումը նրա անձնական կյանք արդարացված կլինի այնքանով, որքանով որոշ փաստերի երևան գալը կրիսի ապրօքապես հասարակության շահերից: Այս դեպքում դատարանն էլ է իր հերթին խիստ պահանջներ ներկայացնում:

2.Եթե հերոսը սովորական քաղաքացի է, լրագրողի իրավունքները՝ ներխուժելու որևէ մեկի անձնական կյանք, խիստ սահմանափակ են: Պատճառը պարզ է. չէ՞ որ, եթե առաջին դեպքում գործ ունենք հասարակական շահերի, ապա այս դեպքում մասնավոր անձանց կյանքի հետ: Արհասարակ, միջամտություն անձնական կյանքին չի նշանակում միայն ինտիմ տեղեկատվության հրապարակում: Եթե թերթում, կայքում հայտնվում է որևէ մեկի լուսանկարը, առանց վերջինիս համաձայնության, ուսունական արնչվում է այս դրույթին: Այս մասով ևս պահանջները տարբեր են, և լուսանկարների հրապարակումն առավել զգուշություն է պահանջում:

ԹԵՍԱ 8

ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատական խրոնական թերևս ամենաընթերցվող բաժինն է: Հետևաբար, դատական գործընթացների լուսաբանումը մեծ պրոֆեսիոնալիզմ ու մասնագիտական նրբություններ է պահանջում: Իրականում սա այն ուրոտն է, երբ լրագրողները տեղեկատվություն ստանալու առումով սահմանափակ են իրենց գործողություններում: Այդուհանդեռձ, կան որոշ իրավական ակտեր, որոնք նախատեսում են հասարակության բավարար իրազեկվածությունը դատական գործընթացների ժամանակ: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» (2003)13 Հանձնարարականը սահմանում է. «Հանրությունը պետք է հնարավորություն ունենա լրատվամիջոցների միջոցով տեղեկատվություն ստանալ դատական և իրավապահ մարմինների գործումների մասին»: Ըստ այդմ, լրագրողները պետք է հնարավորություն ունենան ազատորեն լուսաբանելու քրեական դա-

տավարության գործընթացը՝ Ենթարկվելով միայն ներքոհիշյալ սկզբունքներով նախատեսված սահմանափակումներին»¹²:

Դատական քննության լուսաբանման և հրապարակայնության հարցերը կարգավորվում են նաև <<Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ և <<Քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածներով: «Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի՝ «Կարգը դատական նիստում»՝ դռնբաց դատական նիստին ներկա գտնվողները (ներայալ լրագրողները) իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ճայնագրություն: Դատական նիստի կինո և լուսանկարահանումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ»: Ասել է, թե՝ դատական գործընթացների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից լիարժեք չէ, քանզի շատ դեպքերում լրագրողներին կամ հնարավորություն չի տրվում ծանոթանալու դատական քննության նյութերին ամբողջությամբ, կամ էլ պետք է բավարարվեն իրավապահ մարմններից, ոստիկանության լրատվական ծառայություններից, կողմերի շահերի ներկայացուցիչներից:

Անմեղության կանխավարկածի սկզբունք

Շատ երկրների ժուրնալիստական էթիկայի կանոնագրերում, ինչպես նաև տարբեր լրատվամիջոցների ու լրագրողական կազմակերպությունների կողմից առանձին կերպով քննվում են, օրինակ, դիակների, վիրավորվածների և, առհասարակ, տուժածների լուսանկարահանման ու ցուցադրյան հարցերը, կարևորվում է օրինազանցներին մինչև դատական գործընթացի ավարտը և ՎՃ՛Ի կայացումը ճիշտ բնութագրելը (մեղադրյալ, ամբաստանյալ, հանցագործ ձևակերպումները կարող են վնասել հատկապես անշափահասների հեղինակությունը, քանի դեռ ապացուցված չէ նրանց մեղքը): Այստեղ է, որ կարևորվում է անմեղության կանխավարկածի սկզբունքի պաշտպանության հիմնահարցը:

«Հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով և դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի՝ «Յուրաքանչյուր ոք, եթե որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադ-

¹² www.ypc.am

րանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշար դատարանի կողմից» (հոդված 6, մաս 1): Նոյն հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև որ նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան»:

Սարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասով և «Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվելու մինչև այն պահը, քանի ոեւ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվել իրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները»:

Ըստ «Համանադրության 21-րդ հոդվածի. «Հանցագործության մեջ մեղադրվող համարվում է անմեղ, քանի ոեւ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չի արաւուված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»: «Համանադրության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը նույնպես երաշխավորում է անձի անմեղության սկզբունքի պաշտպանությունը, քանի ոեւ չկա ուժի մեջ մտած դատավճռի, որով ապացուցված կիամարվի նրա մեղավորությունը»:

Լրագրողները հաճախ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով անտեսում են օրենքի պահանջը: Երբեմն անփոյթ լրագրողները իրար են խարսում մեկնաբանություններն ու բուն փաստերը: Իրենց իրապարակումներում արդեն հանցագործ են անվանում այն մարդուն, որի մեղավորությունը դեռևս չի ապացուցվել դատարանում: Սա ոչ միայն օրենսդրական, այլև լուրջ էթիկական խախտում է:

ԹԵՍԱ 9

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ գլխավոր դատախազությունը և Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012 թ. նոյեմբերի 22-ին մշակել են քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոններ¹³, նպատակ ունենալով կանոնակարգելու քրեական դատավարության վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից իրականացվող տեղեկատվական քաղաքականությունը, մշակել մամուլի պաշտոնական հաղորդագրություններին ուղղված պահանջները՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները:

Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներով, ՀՀ Սահմանադրության 21-րդ, 23-րդ և 27-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները ոչ իրավաչափ գործունեության արդյունքում հնարավոր է բախվեն՝ նաև անոններով փորձ է արվել սահմանել իրավական չափորոշիչներ՝ նպատակ ունենալով ապահովել մարդու իրավունքների հավասարակշռված պահպանումը քրեական դատավարության վերաբերյալ հաղորդագրություններ տարածելիս:

Դաս 12-13 (4 ժամ սեմինար պարապմունք)

ՔՍՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Սահմանադրական դատարանի որոշումը գրպարտության և վիրավորանքի գործերը քննելիս:
- Անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման դեպքերը ԶԼՍ-ներում:
- Դատական նիստերի լուսաբանման առանձնահատկությունները:
- Հանդիպում իրավաբանի հետ:

Հանձնարարված գրականության քննարկում «Տեսանկարահանումը դատական դահլիճում» թեմայով:

¹³ www.foi.am

Դաս 14-15 (4 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱ 10

ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Արտահայտվելու ազատությունը բավական ընդգրկուն հասկացություն է և մարդուն տրված է ի ծնե: Մարդն իր շրջապատի հետ կարող է հարաբերվել հաղորդակցման տարրեր ձևերով՝ վերբալ (խոսքային) և ոչ վերբալ (ժեստերի, ձայնի և պատկերի) միջոցով: Ժողովրդավարական հասարակություն ձևավորելու կարևոր պայմաններից մեկը տեղեկատվության ազատ ճեռքբերումն ու տարածումն է: Այս պահանջը կարգավորվում է թե՛ ազգային օրենսդրությամբ, թե՛ միջազգային իրավական տարրեր կաստաթղթերով:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը խոսքի ազատության կարևոր երաշխիք է: Այն է. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

1946թ. ՄԱԿ-ի Գլխավոր Կեհաժողովի ընդունած առաջին բանաձևերից մեկով, 1948թ. ընդունված Մարդու իրավունքների համընդիանուր իրշակագրի 19-րդ, ինչպես նաև՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածներով ևս պաշտպանվում է մարդու ազատ արտահայտվելու իրավունքը:

Տեղեկատվության ազատության պատմական զարգացումը վաստում է, որ դեռևս սկսած 15-րդ դարից՝ Եվրոպայում տպագիր մամուլի ծնունդից ի վեր, այն վերահսկվել է գործող իշխանության կողմից: 17-18-րդ դարերի սահմանագլխին նոր քաղաքական տեսությունների և լուսավորության դարաշրջանի փիլիսոփայության ազդեցությամբ առաջ եկան որոշ գաղափարներ այն մասին, թե մամուլի ազատությունն անհրաժեշտ է բռնատիրության ու մարդկանց ճնշման դեմ պայքարում (Սպինոզա, Ջ. Միլրոն, Զ. Լոբ):

Ավելի ուշ՝ ԽՍՀՄ-ի տարիներին մամուլն ամբողջապես ծառայում էր կոնունիտական գաղափարախոսության տարածմանը: Իրավիճակը ասիսկին միութենական հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, փոխվեց խորհրդային կադրերի փլուզումից հետո: Տեղեկատվության ազատության կարգավորումն օրենսդրական դաշտ տեղափոխվեց:

ԹԵՍԱ 11

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈՂՎԱԾ. ՍԱԿՄԱՆՈՒՄՆ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԱԿՄԱՆՍՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիրն (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 4-ին Հռոմում: Կոնվենցիայի 10-րդ հողվածը սահմանում է խոսքի ազատությունը՝ նշելով վերջինիս հիմքերը: Այն է. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից: Այս հողվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ընկերությունների արտոնագրում»: Սակայն ցանկացած տիպի ազատություն նախնական ենթադրում է որոշակի սահմանափակում: Խոսքի ազատությունը ևս բացարձակ չէ, և այն կարող է սահմանափակվել հօգուտ այլոց իրավունքների, պետական անվտանգության, դատական համակարգի անաշարժ գործունեության պաշտպանության: Ահա այս երեք հիմնական դրույթներն են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հողվածի 2-րդ կետով նախատեսված խոսքի ազատության սահմանափակման հիմքում:

Դաս 16-17 (4 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱ 12

ՄԱՍՆԱԿՈՐ ԿՅԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

<< ազգային օրենսդրությամբ, ինչպես նաև վավերացված միջազգային իրավական ակտերով կարգավորվում է մարդու հիմնարար ազատություններից ու իրավունքներից մեկը՝ անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Որպես այդպիսին համարվում է մարդու անձնական, ընտանեկան, ինտիմ բնույթի տեղեկատվության գաղտնիությունը այլ անձանցից, այդ թվում՝ լրատվամիջոցներից: Այլ կերպ ասած՝ անձնական բնույթի տեղեկատվությունը ենթակա չէ իրապարակման:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հողվածը

սահմանում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի, բնակարանի անձեռնմխելիության և նամակագրության գաղտնիության իրավունք»:

Մեզանում թեև չկա անձնական կյանքի մասին արանձին օրենք, այնուամենայնիվ, այս իրավունքն իր պաշտպանությունն է գտնել ինչպես ՀՀ Սահմանադրության մեջ (23-րդ հոդված), այնպես էլ մի շարք այլ օրենքներում: Անձի մասնավոր կյանքի մասին տեղեկությունների հրապարակումը նշշտ է մեծ հետաքրքրություն է առաջացնում: Այստեղ պետք է տարանջատել սովորական քաղաքացի, պետական գործիչ հասկացությունները, քանզի օրենքը, իմք ընդունելով հասարակական շահը, ավելի նեղմ դիրքորոշում ունի հանրային դեմքերի անձնական կյանքի մասին տեղեկություններ հրապարակելու հարցում: Մինչդեռ սովորական քաղաքացիների դեպքում՝ ոչ:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի **1998թ. ընդունած «Անձնական կյանքի իրավունքի մասին» 1165 բանաձևը** որոշակիացնում է պետական գործիչների անձնական կյանքի սահմանները: Բանաձևի 5-րդ կետը նշում է. «...մարդկանց անձնական կյանքի մանրանական նշանակությունը պահպանվում է առաջարկությունների համար դարձել են շահութաբեր վաճառքի առարկա: Նրանց գործերը հիմնականում հանրային գործիչներն են, որոնց կյանքի մանրամասների հարգանքը կապահպանվում է իրավական կառույցում: Միևնույն ժամանակ, հանրային գործիչները պետք է ընդունեն, որ իրենք հատուկ դիրք են գրավում հասարակության մեջ, շատ դեպքերում իրենց ընտրությամբ, որն ինքնաբերաբար հանգեցնում է հանրության կողմից իրենց անձնական կյանքի հանդեպ ունեցած ճնշման ավելացմանը»¹⁴: Ավելին, «Պետական և հատկապես քաղաքական գործիչների մասնավոր կյանքի որոշ փաստեր, իհարկե, կարող են հետաքրքրություն ներկայացնել քաղաքացիների համար, որոնք նաև ընտրողներ են և, հետևաբար, ընթերցողներն իրավունք ունեն տեսյակ լինել այդ փաստերի մասին»¹⁵:

¹⁴ Ը. Դոյդոյան, ՁԼՍ և օրենսդրություն, Երևան, 2007,էջ 24:

¹⁵ Սույն տեղում:

ԹԵՍԱ 13

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Հ Քրեական օրենսգրքի որոշ հոդվածներ սահմանում են անձի մասավոր կյանքի իրավունքը: Այսպես՝ օրենսգրքի 144-146-րդ հոդվածներով հանապատասխանաբար պատիժ է նախատեսված անձնական կամ ընտանեկան կյանքի մասին, բժշկական գաղտնիության, գաղտնի ծայնագրության, դրանց տարածման ու հրապարակման համար: Սակայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում որոշակի անհամաձայնություն կա նախորդի հետ: «Պատճառը լրագրողի՝ հասրակական շահով պայմանավորված տեղեկություն ազատ ստանալու, տարածելու կամ հրապարակելու իրավունքն է: Այն է. «Գաղտնի տեսածայնագրմանը ծեռք բերված, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունների տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»: Սակայն կա մեկ կարևոր հանգամանք ևս, որ լրագրողը չի կարող պատասխանատվության ենթարկվել անձնական բնույթի տեղեկատվության հրապարակման համար, եթե նախապես ունի տվյալ անձի համաձայնությունը:

Այդուհանդերձ, օրենքը անձնական կյանքին միջամտության հարցերը կարգավորում է ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական հարթությունում, այն է՝ *հերքում, պատասխանի իրավունք, վնասի փոխհատուցում*, որոնք սահմանված են ՀՀ Քաղացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետով, «Զանգվածային լրատվության մասին» օրենքով:

Դաս 18 (2 ժամ սեմինար պարապմունք)

Քննարկվող հարցեր

- ՀՀ Սահմանդրության 23-րդ, 27-րդ և Կոնվենցիայի 8-րդ, 10-րդ հոդվածների համեմատություն:
- Մասնավոր կյանքի միջամտության օրինակների ուսումնասիրում, վերլուծում:

Հանձնարարված գրականության քննարկում «Մարդու պատվի և արժանապատվության, մասնավոր կյանքի անձռնխելիության իրավունքները» թեմայով:

Դաս 19 (2 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվության ազատությունն ինչքան էլ երաշխավորի Սահմանդրությամբ, այլ օրենքներով ու միջազգային իրավական ակտերով, այնուամենայնիվ, եթե գործ ունենք այնպիսի տեղեկատվության հետ, որի իրապարակումը կարող է վնասել պետության անվտանգությանն ու համարվել պետական գաղտնիք, կարող է սահմանափակվել:

Պետական գաղտնիքի հասկացությունն ու տեսակները, պահպանման ժամկետներն ամբողջացված են 1996թ. դետեմբերի 30-ին ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի նախին» օրենքում. «Պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար»:

Օրենքը տարբերում է պետական գաղտնիքի 3 աստիճան՝ գաղտնի, հոյժ գաղտնի և հատուկ կարևորության՝ պայմանավորված գաղտնի տեղեկությունների կարևորությամբ: Ըստ այդմ էլ՝ տարբեր են դրանց պահպանման ժամկետներ:

Պետական գաղտնիքի հրապարակումը քրեորեն պատժելի արարք է,

որը նախատեսված է Քր. օրենսգրքի 306-րդ հոդվածով, ասել է, թե՝ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ դիտավորությամբ հրապարակելն այն անձի կողմից, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, և ում դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմանք, եթե բացակայում են պետական դաշտանության հատկանիշները՝ պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով՝ կամ ազատազրկմանք՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Պետական գաղտնիքն անզգուշությամբ հրապարակելը՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմանք՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։ Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացել է ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմանք՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»¹⁶:

Դաս 19-20 (4 ժամ սեմինար պարապմունք)

ՍԵՍԻՆԱՐ 1

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Պետական գաղտնիքի ցանկին դասվող տեղեկություններ:
- Պետական գաղտնիքի երեք աստիճանները՝ գաղտնի, հոլով գաղտնի, հատուկ կարևորության :

ՍԵՍԻՆԱՐ 2

- Պետական գաղտնիք չհամարվող տեղեկություններ:

Հանձնարարված գրականության քննարկում «Տեղեկատվական անվտանգության հիմնահարցերը» և «Տեղեկատվական պատերազմներ» թեմաներով։

¹⁶ ՀՀ Քրեական օրենսգիրք, Հոդված 306։

Դաս 21-22 (4 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱ 15

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ՀԱՐՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեզանում յուրաքանչյուր ոք իրավունք ունի ձեզք բերել իրեն անհրաժեշտ տեղեկությունը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի): Սա են փաստում ոչ միան ՀՀ Սահմանադրությունը, այլև «Զանգվածային լրատվության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև տեղեկատվության ստացման տեսակները՝ բանավոր և գրավոր, դրանց ներկայացվող պահանջները: Օրինակ, եթե բանավոր հարցման ժամանակ հարցումը ներկայացնողը պետք է նշի անուն-ազգանունը, ապա գրավոր հարցումը այս տվյալներից գատ պետք է պարունակի նաև գործունեության հասցեն, քաղաքացիությունը, լինի ստորագրված:

Տարբեր են նաև բանավոր և գրավոր հարցմանը պատասխանելու կարգերը: Եթե բանավոր հարցման պատասխանը տրվում է հարցը լսելուց անմիջապես հետո կամ սեղմ ժամկետում, ապա գրավոր հարցման դեպքում օրենքը նախատեսում է 5-օրյա ժամկետ (բացառությամբ այն դեպքերի, եթե լրացուցիչ ճշգրտումներ կատարելու համար օրենքը նախատեսում է 30 օր):

Օրենքը սահմանում է նաև անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման համար նախատեսված վճարները: Դրանք հիմնականում վճարովի են, բացառությամբ օրենքով նախատեսված դրույթների¹⁷:

ԹԵՍԱ 16

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Տեղեկատվություն տնօրինողները տարբեր գերատեսչություններն են, պետական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու առանձին պաշտոնատար անձինք, որոնք մշտապես լրագրողների ուշադրության կենտրոնում են՝ նրանցից կոնկրետ

¹⁷ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 2003:

տեղեկություններ ստանալու ակնկալիքով:

Թեև օրենսդրական պահանջ է տեղեկատվության տրամադրումն ու որոշ դեպքերում դրա մերժումը, այնուամենայնիվ, նշված կառույցների պատասխանատունների կամայականությունները քիչ չեն տեղեկատվության մերժման գործում: Սա Վտանգում է ցանկացած գերատեսչության ազատ, թափանցիկ գործելառձը, ինչն էլ լրագրողներին ստիպում է անհրաժեշտ տեղեկությունը ծերել այլ ձանապարհով:

«Տեղեկատվության ազատության մասին» <<օրենքով սահմանված են տեղեկատվության մերժման հիմքերը, որոնք առնչվում են թե պետական գաղտնիքին, թե անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությանը (փոստային, բանկային, արևտրային, առողջապահական, հեռագրական, նամակագրական և այլն): Ըստ օրենքի՝ տեղեկատվությունը կարող է մերժվել նախատեսված գումարը չվճարելու դեպքում¹⁸:

Դաս 23-24 (4 ժամ սեմինար պարապմունք)

ՍԵՄԻՆԱՐ 1

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- <<օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»:
- <<օրենքը «Զանգվածային լրատվության մասին»:

ՍԵՄԻՆԱՐ 2

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հանձնարարված գրականության քննարկում «Տեղեկատվության տրամադրման մերժման դեպքերոց», «Քովիի փեյսթ մերիագրագիտության պակա՞ս, թե՞ արագ լսարան գրավելու միջոց» թեմաներով:

Դաս 25-26 (4 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱ 17

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԱԲԱՆՍԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ

Ընտրությունների արդար, թափանցիկ կազմակերպումն ու անցկացումը ժողովրդավարական պետության կայացման պահանջներից է:

¹⁸ Նույն տեղում, Յոդված 11:

Սա մի գործընթաց է, որին իր ակտիվ մասնակցությունն է ունենում հասարակությունը: Ընտրական գործընթացների կարևոր սկզբունքներից մեկը հրապարակայնությունն է, որի համար պատասխանատու են զանգվածային լրատվության միջոցները:

Մեզանում նոր Ընտրական օրենսգիրքն ընդունվեց 2011թ. մայիսի 26-ին (Նախկինը՝ 1999թ.), որում ընդհանուր դրույթներից ու ընտրական գործընթացները բնորոշող հասկացություններից բացի, մեկնաբանվում են նախընտրական քարոզչության անցկացման կարգն ու ԶԼՄ-ներով լուսաբանումը: Այս առումով ուշագրավ են 19-րդ և 20-րդ հոդվածները:

Օրենսգրքով նախատեսված է նաև թեկնածուների՝ անվար և վճռվի եթերաժամանակի տրամադրման իրավունքից օգտվելու հավասարության սկզբունքը, ձևերը: Բոլոր թեկնածուները պետք է հնարավորություն ունենան հավասար պայմաններում մրցակցել, իսկ Հանրային հեռուստագործությունը և հանրային ռադիոն պարտավոր են հավասար պայմաններ ապահովել ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար¹⁹: Նոր ԸՕ-ով կարգավորվում է մերօրյա լրագրողական միջավայրից դեպի քաղաքականություն մուտք գործել ցանկացող լրագրողների՝ եթերային իրավունքից օգտվելու հարցը: Ասելի, թե՝ «Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստագործությունների՝ որպես թեկնածու գորանցված աշխատակիցներին արգելվում է ընտրությունների լուսաբանումը, ռադիոհաղորդումների կամ հեռուստահաղորդումների վարումը կամ դրանցով հանդես գալը, բացառությամբ սույն օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված դեպքերի»²⁰:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոնֆինտի 1999թ. սեպտեմբերի 9-ին ընդունված թիվ R (99)15 հանձնարարականը կարևորելով խոսքի ազատության հիմարար իրավունքը, ընտրական գործընթացներում լրատվամիջոցների մեջգրավածությունն ու դրանց անաշար լուսաբանումը՝ «հանձնարարում է անդամ երկրների կառավարություններին՝ ուսումնասիրել մանուլի կողմից ընտրաշավամների անաշար, հավասարակշռված և անկողմնակալ լուսաբանումը երաշխավորող ուղիները եւ քննարկել այս սկզբունքերն իրենց օրենքներում ընդգրկելու հնարավորությունը»²¹:

¹⁹ «Ընտրական օրենսգրք», Հոդված 20, 2011:

²⁰ Նույն տեղում, Հոդված 21.1:

²¹ ԶԼՄ-ները և ընտրությունները, ԵՄ, Երևան, 2007, էջ 6:

ԹԵՍԱ 18

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Լրագրողների համար տեղեկատվության մատչելիության հարցը հատկապես կարևորվում է ընտրությունները լուսաբանելիս: Ընտրական գործընթացների հրապարակայնության հարցը ևս օրենսդրական պահանջ է, որը նախատեսված է ՀՀ Ընտրական օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով և այլն:

Հասարակության հետաքրքրությունը ավելի մեծ է հատկապես ընտրական գործընթացներում ներգրավված քաղաքական գործիչների ոչ նիայն անձի, այլև ունեցվածքի հանդեպ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարագրում է յուրաքանչյուր թեկնածուի ունեցվածքը, որը գաղտնիք չէ, և ցանկացած լրագրող կարող է ստանալ այդ տեղեկությունը: Վերջին ընտրությունները, ըստ Երևանի մանուկի ակումբի անցկացրած մշտադիտարկման, անցել են ավելի թափանցիկ²²:

Դաս 27 (2 ժամ սեմինար պարապմունք)

ՔԱՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Ընտրական գործընթացների թափանցիկությունը Հայաստանում:
- Ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հռչակագիր /Երևանի Մամուլի կումբ/:

Հանձնարարված գրականության քննարկում «Հայաստանում հրապարակայնության սկզբունքի խախտումը ընտրական գործընթացներում» թեմայով:

²² www.ypc.am

Դաս 28-29 (4 ժամ դասախոսություն)

ԹԵՍԱ 19

ԼՐԱԳՐՈՂԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՄՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երկրի դեկավարի, վարչապետի և այլ պաշտոնատար անձանց այցերը լուսաբանելու համար անհրաժեշտ է լրագրողների հավատարմագրումը: Սա մի կողմից օգնում է լրագրողներին անկաշկանդ լուսաբանել պետական այցերն ու տարբեր միջոցառումները, մյուս կողմից հեշտացնում է տարբեր գերատեսչությունների գործունեության լուսաբանումը: Գործընթացը կարգավորվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ինչպես նաև 2004թ. ընդունված ՀՀ պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման Օրինակելի կարգով, որոնցում նշված են ողջ գործընթացի կարգն ու պայմանները, մերժման հիմքերը: Հիշյալ փաստաթթերով բացառվում է լրատվամիջոցների միջև խտրականությունը, ինչպես նաև պաշտպանվում է լրագրողների՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ անկախ նրա հավատարմագրումից²³: Կարգի համաձայն՝ հավատարմագրումն իրականացվում է մեկ տարի ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ լրատվական գործունեություն իրականացնողը դիմումի մեջ նշում է իրեն հարմար ժամկետը:

Ընդհանուր առնամբ հավատարմագրման գործընթացը բաց է, ասել է, թե՝ իրականացվում է ինչպես տարբեր գերատեսչությունների կայքերում տեղադրված հայտարարություններով, այնպես էլ լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացրած դիմումի համաձայն: Երկու դեպքում էլ առկա են «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով և Օրինակելի կարգով սահմանված պայմանները:

ԹԵՍԱ 20

ԼՐԱԳՐՈՂԻ ՄԱՍՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒՄ

Թեև օրենքը բացառում է լրատվամիջոցների հավատարմագրման, տեղեկատվության չտրամադրման խտրականությունը, այնուամենայ-

²³ Օրինակելի կարգ, Կետ 15, /Ե / Ենթակետ, 2004:

Օիվ, գործնականում լրագրողները հանդիպում են հենց այդպիսի սահմանափակումների, որոնք երթեմն ազրեսիվ բնույթի եմ՝ Վիրավորանք, տեխնիկայի խլում, կրիվ և այլն: Լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը մեզանում կարգավորվում է ոլորտին առնչվող տարրեր օրենքներով: Ավելին, այն իր պաշտպանությունն է ստացել նաև Քրեական օրենսգրքում, որի 164-րդ հոդվածը պատիժ է սահմանում «նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Եթե նոյն արարքը պաշտոնական անձը կատարել է իր պաշտոնական դիրքն օգտագործելով, ապա ենթակա է պատասխանատվության ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ ազատազրկման՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ ոռոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադադարի կողմանը կամ առաջարկությունը 3 տարի ժամկետով՝ կամ առանց դրա»:

Դաս 30 (4 ժամ սեմինար պարապմունք)

ՍԵՍԻՆԱՐ 1

ՔՍՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- Խտրականության բացառումը լրագրողներին հավատարմագրելիս:
- Հավատարմագրման ժամկետները, մերժման հիմքերը:

Հանձնարարված գրականության քննարկում «Լրագրողների նկատմամբ բռնության դեպքերը Հայաստանում» թեմայով:

ՍԵՍԻՆԱՐ 2

ՔՍՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- «Հ օրենքը «Գովազդի մասին»:
- «Հ օրենքը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին»:
- «Հ օրենքը «Լեզվի մասին»:
- «Հ օրենքը «Անհատական տվյալների մասին»:

Հանձնարարված գրականության քննարկում «Համացանցի իրավական կարգավորումը Հայաստանում» թեմայով:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ա. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Արտիկլ 19», Զանգվածային լրատվության միջոցներ, Օրենք-ներ և պրակտիկա, Երևան, 1999, 190 էջ:
2. Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Լոնդոն, 2005, 48 էջ:
3. Քերտրան Ժան-Կլոդ, Մանուկի ազատության պաշտպանության երաշխիքներ, Լրատվական էթիկայի և պատասխանատվության համակարգեր, Երևան, 2000, 209 էջ:
4. Դոյդոյան Շ., Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երևան, 2001, 113 էջ:
5. Դոյդոյան Շ., ՁԼՍ և օրենսդրություն, Երևան, 2007, 217 էջ:
6. Դոյդոյան Շ., Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երևան, 2005:
7. Դոյդոյան Շ., Ինչպես օգտագործել «Տեղեկատվության ազատության մասին» <<օրենքը, ուղեցույց լրագրողների համար, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2-րդ իրատարակություն, 2006:
8. Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն, Երևան, 2000:
9. Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, Երևան, 2003, 258 էջ:
10. ՁԼՍ-ները և ընտրությունները, ԵՄ, Երևան, 2007, 68 էջ:
11. Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Ա, Երևան, 2000, 252 էջ:
12. Ժուռնալիստիկա, Տեսության և պատմության հարցեր, Պրակ Դ, Երևան, 2003, 245 էջ:
13. Իրավունք, էթիկա և մասնագիտական հմտություններ հետաքննող լրագրողների համար, Երևան, 2008, 226 էջ:
14. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Երևան, 2004, 203 էջ:
15. Լեռնարդ Ռեյ Թիլ, Ռոն Թեյլոր, Դեպի խմբագրություն, Ժուռնալիստիկայի ներածություն, Երևան, 2005, 286 էջ:
16. Մամուլը և ժողովրդավարությունը, Երևան, 2001:

17. Մարդու իրավունքների մասին Եվրոպական հռչակագրի 10-րդ հոդվածի առնչությամբ կայացրած դատական որոշումների մասին Եվրախորհրդի հաշվետվություն, Երևան, 2003:
18. Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, փաստաթղթերի ժողովածու, Գիրք Ա, Երևան, 2001:
19. Մելքին Մենչեր, Լրագրության հիմունքներ, Երևան, 2005, 435 էջ:
20. Մինասյան Ռ., Դատավճիռ, Երևան, 2003, 366 էջ:
21. Պետրոսյան Վ. Գ., Ժուրնալիստական էթիկա. հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում, Երևան, 2012, 107 էջ:
22. Պետրոսյան Վ. Գ., «Օրենսդրության և ժուրնալիստական էթիկայի փոխարաբերության հարցի շուրջ», Բանբեր Երևանի համալսարանի, 3/126/, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2008, էջ 178-183:
23. Պետրոսյան Վ. Գ., «Էթիկական կանոնագրերի ստեղծումը և կիրառումը Հայաստանում», Կանքեր, Գիտական հոդվածների ժողովածու 1/38/, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2008, էջ 63-67:
24. Պետրոսյան Վ. Գ., «Հեղինակային և հարակից իրավունքների օրենսդրական կարգավորումը Հայաստանում», Ժուրնալիստիկա. տեսության և պատմության հարցեր, Պրակ ԺԲ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2012, էջ 149-153:
25. Պետրոսյան Վ. Գ., «Համացանցի իրավական կարգավորման հայկական և միջազգային փորձը», Նոր և այլընտրանքային մերիա. էթիկական և իրավական խնդիրներ, Երևան, 2012, էջ 44-49:
26. Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը, Երևան, 2000, 155 էջ:
27. Авраамов Д. С., Профессиональная этика журналиста, М., 1999, 206 с.
28. Апресян Р. Г., Гусейнов А. А., Этика: Энциклопедический словарь, М., 2001, 308р.
29. Базылев В. Н., Бельчиков Ю. А., Леонтьев А. А., Сорокин Ю. А., Предварительские материалы по исследовательской теме, оскорблечение и ненормативность в текстах средств массовой информации, М., 1999, 352 с.

30. Беспалова А. Г., История мировой журналистики, Ростов-на Дону, 2000, 570 с.
31. Брайант Д., Томпсон С., Основы воздействия СМИ, Москва-Санкт-Петербург-Киев, 2004, 425 с.
32. Ворошилов В. В., Журналистика, Санкт-Петербург, 2002, 655 с.
33. Герман Шварц, Чарльз Браун, Судьи и журналисты в странах восточной Европы в переходе к демократии, Freedom House, Киев, 1998, 306 с.
34. Дзялошинский И. М., Журналист и информация, Правознать, 1999, №11, 227с.
35. Дж. Гора, Д.Голдберг, Г.Стерн, М.Гальперин, Право на протест, Санкт-Петербург, 1999.
36. Журналист в поисках информации, Фонд защиты гласности, Москва, 1997.
37. Засурский Я. Н., Вартанова Е. Л., Засурский И. И., Рихтер А. Г., Средства массовой информации постсоветской России, М., 2002, 262 с.
38. Законодательство о СМИ, Учебно-практические материалы, Москва, 1999.
39. Законы и практика СМИ в странах СНГ и Балтии, Фонд защиты гласности, Москва, 1999.
40. Информационное право, учебник, Бачило, Лопатин, Федотов, С. Петербург, 2001.
41. Лазутина Г. В., Профессиональная этика журналиста, М., 2002, 206 с.
42. Защита журналистских источников: сравнительное законодательство и юриспруденция, Артикл 19, Апрель, 1995, 153 с.
43. Монро Прайс, Питер Круг, Благоприятная среда для свободных и независимых средств массовой информации, М., 2001, 259 с.
44. Муратов С. А., Нравственные принципы тележурналистики, Фонд защиты гласности, М., 1997, 211 с.
45. Олсон Э., Проблемы журналистской этики в теории и практике СМИ посткоммунистической России, М., 1999, 241 с.
46. Прохоров Е. П., Введение в теорию журналистики, Рип-холдинг, М., 2000, 306с.
47. Профессиональная этика журналиста, Фонд защиты гласности, М., 2002, 470 с. Рубинов А.З., Частная жизнь журналиста, М., 1994. 275 с.
48. Савельев Н. Б., Защита авторских и смежных прав, М., 2002, 286 с.

49. Самоуправления журналиста, М., 2001, 152 с.
50. Свитич Л. Г., Профессия журналист, М., 1996, 263 с.
51. Теплюк В. М., Этика журналистского творчества, М., 1980, 210с.
52. Тертычный А. А., Жанры периодической печати, М., 2002, 319 с.
53. Туманов В. А., Европейский суд по правам человека, НОРМА, М., 2001, 225 с.
54. Хоружий С.С., Этика науки, М., ИФРАН, 2007, 285п.
55. Этика СМИ, ИТД КноРус, М., 2003, 257 с.
56. David Gordon, John Michael Kittross, Controversies in media ethics, 2-ed edition, Longman, New York, 1998, 316 pages.
57. Clifford G. Christians, Kim B. Rotzoll, Mark Fakler. Media Ethics. Longman Ink. NY, 1987, 307 pages.
58. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003, Paris.
59. Freedom of Information, Herbert Brucker, New York, 2002.
60. Kent R. Middleton, Bill F. Chamberlin, The law of Public Communication, Longman, 1992, 309 pages.
61. Media and Democracy, Council of Europe Publishing, 1998.
62. Media Ethics, 4th Edition, London, 2002, 312 pages.
63. Media lawyers as Factors in the Ethical Decisions of Journalists, NY, p. 204.
64. McQuail D., McQuail's Mass Communication Theory/4th Edition, London, Sage, 2000, 263 pages.
65. Philip Patterson and Lee Wilkins, Media ethics: Issues and Cases, 4th ed., p. 242.
66. The Right to Know, The Right to live, Edited by Richard Calland, Alison Tilley, ODAC, 2002.

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԵՐ

67. «Առավոտ» օրաթերթի էթիկայի կանոնագիր:
68. ԵՊՀ ժուրնալիստիկայի ֆակուլտետի էթիկայի կանոնագիր:
69. Երևանի մամուլի ակումբի էթիկայի կանոնագիր:
70. Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողի վարքագծի կանոնագիր:
71. Լրագրողների ավատրակական ընկերակցության 1984թ. էթի-

- կայի կանոնագիրը, հոդված 1-ին, ՀՀ իրավաբանների միության «Իրավական գիտելիքներ լրագրողներին» դասընթացի նյութեր, ԱՄՆ իրավաբանների (ABA/CEELI), Երևան, 1999:
72. Հայաստանի ժուռնալիստների միության անդամի էթիկայի կանոնագիր:
 73. Հետաքրննող լրագրողների ընկերակցության էթիկայի կանոնագիր:
 74. Кодекс профессиональной этики журналиста (принят 1 съездом журналистов СССР на конфедеративной основе 24 апреля), 1991г.

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

75. Անհատական տվյալների մասին ՀՀ օրենք, 2002:
76. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարական (2003)13 «Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու մասին»:
77. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարական Rec (2002)2 «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ»:
78. Չանգվածային լրատվության մասին ՀՀ օրենք, 2003:
79. Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենք, 2000:
80. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենք, 1996:
81. ՀՀ Ընտրական օրենսգիրք, 1999:
82. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 2005:
83. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 2003:
84. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 1998:
85. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 1998:
86. ՀՀ Սահմանադրություն, 2005:
87. ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1998թ. մարտի 13-ի թիվ 173 որոշում:
88. Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա, 1953:
89. Պետական և ծառայողական գաղտնիքի մասին ՀՀ օրենք, 1996:
90. Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք, 2003:

91. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին մի-
ջազգային դաշնագիր, 1966:
92. Օրհուսի կոնվենցիա, 1998:

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

93. www.aravot.am
94. www.evartist.narod.ru
95. www.hetq.am
96. www.internews.am
97. www.jnews.am
98. www.library.cjs.ru
99. www.medialaw.ru
100. www.newsombudsmen.org
101. www.poynter.org
102. www.ypc.am
103. www.gdf.ru
104. www.freespeech.org
105. www.freeexpression.org
106. www.freedominfo.org
107. www.article19.org
108. www.foi.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Դասընթացի նպատակը | 3 |
| Ակնկալվող կրթական նպատակները | 4 |
| Դասընթացի կարուցվածքը..... | 5 |
| Ներածություն..... | 5 |
| Թեմա 1. Ժուրնալիստական էթիկան իրեն լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգ..... | 6 |
| Թեմա 2. «ՁԱՍ-ՆԵՐԻ ինքնակարգավորում» համացույցունը, ժամանակակից մեխանիզմները, տեսակներն ու գործառույթները | 7 |
| Թեմա 3. Էթիկայի կանոնագրերի ստեղծումը և կիրառումը Հայաստանում..... | 9 |
| Թեմա 4. Էթիկայի կանոնագրերն ինքնակարգավորման մեխանիզմների համակարգում, տեսակները և գործառույթները | 11 |
| Թեմա 5. Տեղեկատվության աղբյուրների հետ հարաբերությունների կարգավորման սկզբունքները և մեթոդները | 13 |
| Թեմա 6. Գրագողություն | 16 |
| Թեմա 7. Մարդու իրավունքների և հասարակական շահերի իրավական պաշտպանությունը..... | 18 |
| Թեմա 8. Հանցագործությունների լուսաբանման առանձնահատկությունները | 21 |
| Թեմա 9. Քրեական գործերով տեղեկությունների տրամադրման կանոնների նախագիծ | 24 |
| Թեմա 10. Արտահայտվելու ազատության իրավական կարգավորումը..... | 25 |
| Թեմա 11. Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդված.սահմանումն ու նախատեսված սահմանափակումները | 26 |
| Թեմա 12. Մասնավոր կյանքի պաշտպանությունը Հայաստանում | 26 |
| Թեմա 13. Պատավանատվություն անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը խախտելու համար | 28 |
| Թեմա 14. Պետական գաղտնիքի հասկացությունը..... | 29 |
| Թեմա 15. Տեղեկություն ստանալու կարգը, հարցման ձևերը..... | 31 |
| Թեմա 16. Տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը | 31 |
| Թեմա 17. Ընտրությունների լուսաբանման իրավական կարգավորումը Հայաստանում | 32 |
| Թեմա 18. Տեղեկություն ստանալու իրավունքը ընտրական գործընթացներում | 34 |
| Թեմա 19. Լրագրողի հավատարմագրման գործընթացը Հայաստանում | 35 |
| Թեմա 20. Լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը..... | 35 |
| Հանձնարարվող գրականություն | 37 |

**ԶԼՄ ԻՆՔՍԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
ԴԱՍՏԱԽՈՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Համակարգչային ծևավորող՝ Կ. Չալաբյան
Տեխ. խնբագիր՝ Լ. Հովհաննիսյան**

**Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 2,75:
Տպաքանակը՝ 100 օրինակ:**

**ԵՊՀ հրատարակչություն
Երևան, Ալեք Մանուկյան 1**